

ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆ

Հասցե՝
Rédaction du journal
VERAZNOUÏTOUÏ
ROUSTCHOUK (Bulgarie)

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
Ա. Մ. Է. Ն. Ե. Կ. Կ. Ի. Զ. Ս. Մ. Ա. Բ.
Տարեկան 10 Ժրակի, պեղանետայ 5 Ժրակի.

Գրութիւնները եւ լեւ զարմուխ.
Ծանուցումի տողը՝ 20 սանրիւ.

ԹԻՒՐԲԱՅԱՅ ԴԱՏԸ

— 0 —

1897 թիւից ի վեր եւ նամակներու, քաղաքական հանգամանքները թիւրքիայի շուրջն առաջ բերին մի հիմնական գրութիւն. — Թիւրքաշայ գատի ճակատագիրն անցաւ ուսումնական պետութեան ձեռքը եւ գարձաւ, որոշ տեսակէտից եւ մինչեւ մի յայտնի, բայց որոշիչ, աստիճան, ուսումնական ներքին խնդիր: Ռուսական բռնակալ տէրութեան ո՛չ միայն արտաքին քաղաքական շահերը թիւրքիայի նկատմամբ, այլ եւ ներքին շահերն այժմ աւելի քան երբեք շոջափառ են թիւրքաշայ գատով: Ժամանակին Անգլիայի քաղաքականութեան գերակշռութիւնը Կ. Պոլսում անխախտ ու զօրաւոր շանթարգելի դեր էր կատարում Ռուսաստանի փոթորկալի յաւակնութիւններին դէմառահասարակ թիւրքիայում եւ մասնաւորապէս թիւրքաշայ գատի վերաբերութեամբ: Վերջինս իւր աշխարհագրական գիրքի լուծումով, նոյն իսկ Բերլինի Դաշնագրի զօրութեամբ, յայտնելով Ռուսաց-Հայաստանի բնական շարունակութիւնը, առանձին տհաճութեան առիթ է եղել միշտ Ս. Պետերբուրգում: Այդ հանգամանքը մեծ բաժին ունի ուսումնական քաղաքականութեան մէջ նոյն իսկ ուսումնական նկատմամբ: Արդարեւ, հաշիւ գծագրելու հաստատեցաւ Բերլինի Դաշնագիրը, հաշիւ մէկ-երկու տարի անցաւ մինչեւ որ ուսումնական պետութիւնն ուղքի եկաւ իր երկամսայ ծանր պատերազմի հետեւանքներից, հաշիւ նա սկսաւ ոտք կոխել մի ոտակալի տեսլիցայի մէջ իր ներքին քաղաքականութեամբ, — հէնց ութսունական թուականներ սկիզբներին նա ձեռնամուխ եղաւ մի շարք բռնաւոր ու հալածողական միջոցների Ռուսաստանի դէմ, սկսելով այդ ընթացքը հայկական գաղութների ազդեցութեամբ կուսով եւ հայերի ընդհանուր պարտաւորեցուցիչ գիտնորագրութեամբ: Դա նախանշանն էր այն քաղաքականութեան, որ ուսումնական միապետութիւնը պէտք է

ունենար թիւրքաշայ գատի հակառակ: Դա նախանշանն էր նաեւ այն հալածող քաղաքականութեան, որին պէտք է, ժամանակի ընթացքում, աւելի զո՛հ դառնային հայերը կողմատու: Ռուսական պետութեան այդ գիրքը մէկ առանձին բարդութիւն է ստեղծում թիւրքաշայ գատի լուծման վերաբերութեամբ: Սուլթանի ետեւից իրրեւ նեցուկ կանգնած է Յարը, որը ձեռք է բերել վճռական դեր թիւրքիայի ներքին խնդիրներում առհասարակ — Մակեդոնական խնդիրը նոր ապացոյց գրան — եւ գլխաւորապէս թիւրքաշայ խնդրում: Այդպիսով այսօր մենք գործունենք ողորդի կերպով ո՛չ միայն թիւրք, այլ ուսումնականութեան շէտ մեր ջանքերի մէջ թիւրքաշայ գատի լուծման համար: Հարցն այդպէս դնելը նշանակում է նրան որոշել: Կարող ենք մենք, քանի որ գոյութիւն ունի Ռուսաստանի բացարձակ գերակշռութիւնը, հասնել թիւրքաշայ գատի լուծման մեր կուսով մի միայն թիւրք պետութեան դէմ: Ենթադրելով իսկ, որ մենք ընդունակ յայտնենք ապստամբական կուսի մղելու Սուլթանական բռնակալութեան դէմ, չե՞նք հանդիպել արդեօք մէկ այլ ստակալի բերդի, որի դէմ կուսին անհնարին է թիւրքաշայ հողի վրայ, չե՞նք հանդիպել արդեօք ուսումնական քաղաքականութեան սիստեմական ընդդիմութեան, որ ինչպէս եղաւ արդեւ թիւրքաշայ գատի լուծման 1896—97 թ. թ., նոյնպէս եւ աւելի խիստ արգելք կարող է հանդիսանալ եւ այսօր, եւ վաղը: Եւ այդ պարագայում նորից ապացոյց չե՞նք ունենալ արդեօք, որ թիւրքաշայ գատն ունի ո՛չ թէ մի գործօն թշնամի սուլթանական պետութիւն, այլ երկու, եւ որքան այդ երկրորդը գործէ մեր դէմ գաղտնաբար, դիպրոմատական ազդեցութեամբ թիւրքիայի վրայ, այնքան աւելի նա կը յայտնէ վտանգաւոր, ըստ պատեհական ու զօրաւոր իր թըշնամութեամբ: Ա՛հ, գիտենք, որ երկուստ մտքերը թիւրքաշայ գատի այդ վիճակում կը տեսնեն ազդեւր իրանց

հիասթափութեան, որպէս եւ յաւակնոտ ու գրգռող մտքերը, ընդհակառակը, կը շարունակեն կուրորէն հետեւել նախկին հին ուղիով: Բայց — ո՛չ մէկը եւ ո՛չ միւսը: Պէտք չէ՛ սեփական ապիկարութիւնն արդարացնելու համար, սեփական մտավախութեան տակ խեղդելով, մնալ անվճռական, տարտամ, գուցէ նահանջ ապիկալ նոր ծանր երեւոյթների ետոր բարդ հանգամանքների առաջ: Պէտք չէ՛ նաեւ աչք ծածկել դըրանց հանդէպ, ինքնակամ թեթեւութեամբ անգիտանալ նրանց եւ առանց յարմարելու գործունէութեան նոր պահանջներին, գործողքի կուսի միեւնոյն հին միջոցները, որոնք այլևս անժամանակայարմար են եւ խնդիրը գնել միեւնոյն հողի վրայ, որ այլևս աննպատակայարմար է: Բացառապէս թիւրքաշայ գատի հողի վրայ գործել այլևս անհետեանք է թուում այդ գատի լուծման համար: Այդ գատի լուծման կենտրոնակալը տեղափոխւած լինելով Ռուսաստան այդ երկրում եւ պէտք է կուսի երկաթը յեղափոխական զնգանի վրայ: Գործուն. ասպարէզի այդ ընդլայնման, այդ նոր գործունէութեան գործողութեան համար այժմ առաջացել են Ռուսաստ. առհասարակ եւ մասնաւորապէս կողմատու, նոյն իսկ հայութեան շուրջը, այնպիսի քաղաքական հանգամանքներ եւ, որոնք արդէն թոսիկեան պահանջում են ուսումնական յեղափոխական ընդհանուր գործունէութեան ընդհանուր հարգելի և յարգելի և մասնաւորապէս կողմատու, նոյն իսկ հայութեան շուրջը, այնպիսի քաղաքական հանգամանքներ եւ, որոնք արդէն թոսիկեան պահանջում են ուսումնական յեղափոխական ընդհանուր գործունէութեան վրայ եւ: Մինչեւ այժմ մենք յանգել ենք այն եզրակացութեան, որ եթէ յեղափոխական գործունէութիւնը եղել է քաղաքական յեղափոխական, այսօր հետեւ պէտք է ընդունել ընդհանուր ծառայելու գառնալ, հատկապէս այսօր ինքն նոյնպէս ինքնակալական: Եւ քանի որ թիւրքաշայ գատի

լուծումը կախած է ուսումնական պետութիւնից, ըստ ինքնական պարզ է, որ այդ լուծման պէտք է եւ կարող է նպաստել ուսումնական գործունէութիւնը, մղելով կուսի ուսումնական բռնակալութեան դէմ: Եթէ միմիայն ուսումնական յերը լինէին դէմ առ դէմ այդ բռնակալութեան, անտարակոյս, ցնորք պէտք է համարէր այդ գործունէութիւնը: Բայց ամբողջ Ռուսաստանի իր բազմազան ցեղերով ու տարրերով գտնուում է ներքին ահաւոր քաղաքական կուսով բռնակալութեան դէմ, մի կուս, որ գնալով աւելի սաստկանում ու ծաւալում է, եւ այդ պարագայում ուսումնական յեղափոխական ջանքերն ընդհանուրի հետմիասին կարող են յուսալիքանց առաւել կամ նազ մօտ յաղթութիւնը: Ահա դա՛ է ուսումնական կուսի գործնական պայմանը, որ գետերեք-չորս տարի առաջ գոյութիւն չունէր, քանի որ գոյութիւն չունէին ուսումնական յեղափոխական այն լայնածաւալ շարժումներն ու խռովութիւնները, որոնք այսօր սկսել են մերկայոյզ ալիքներով զարնել ուսումնական բռնակալութեան արդէն խախտ պատնէշներին եւ սրանք, անտարակոյս, գատապարտած են իրանց վերջնական խորտակման: Այդ խորտակումը կը լինի նաեւ լուծումը թիւրքաշայ գատի: Նոր գործունէութիւնը կարող է եւ պէտք է ունենայ մէկ եւ ընդհանուր ծրագիր ուսումնական եւ թիւրքաշայ հողի վրայ միանգամայն: Նրա հիմնական գրութիւնները, նրա վարիչ սկզբունքները եւ նրա անմիջական մտակայ նըպատակը պէտք է լինին ընդհանուր Արարատից դէպի հարաւ, որպէս եւ դէպի հիւսիս: Բայց այդուհանդերձ, անշուշտ, իւրաքանչիւր հողը, հէնց թէկուզ իրանց քաղաքական ներքին գրութիւններն եւ հասարակական պայմաններն տարբերութեան զօրութեամբ, պէտք է ունենայ գործունակութիւն մէկ իր գործունէութեան նաեւ յստակ եղանակները, որոնք անհրաժեշտ լինելով մի կողմից համար, կարող են միւս կողմից համար չը ներկայացնել նոյնչափ անհրաժեշտութիւն եւ հարկաւոր

հիկները թիւը բազմացնելու համար մարդիկ որոնց նպատակն է ցոյց տալ աշխարհին, թէ ճշմարտութեան և արդարութեան սկզբունքները կարելի է անպատիժ ոտնակոխ անել, ուրեմն վնասը մի կողմից ազդային Բայց միւս կողմից էլ վնասը ընդհանուր ժողովուրդային է. որպէսզի կարողանայ զսպել այն 40, 000 բանւորներին, եւ ընդհանրապէս ժողովուրդի ազնիւ բողոքի ձայնը, նրան հարկաւոր է բազմանցեցնել թիւերի, ժանդարմների գործի շարքերը. Իսկ որտեղից վերցնել դրա համար անհրաժեշտ միլիոնները, ժողովուրդը առանց այն էլ տնքում է ծանր բեռի տակ, աղքատութեան մէջ. նրան աւելի ծանրաբեռնել նշանակում է կրակի վրայ իւր անելու ինչ անել ուրեմն. է՛հ ինչու երկար ու բարակ մտածել, просто и сдѣлано! Յափշտակութեան պատճառներից մէկն էլ այդ է, որ կառավարութիւնը խորամանկութեամբ իբրեւ հիմունք է բերում, որպէսզի թող փչէ միամիտների աչքերն Բայց այդ բացարձակ անիրաւութեան դէմ ո՞ւմ բողոքել, ո՞ր իրաւական օրէնքի գիմնը բուրժուական միամտութիւնը:

Իւրաքանչիւր բարեխիղճ իրաւաբան, միապետական եւ բուրժուական կարգերը խնկարկող իրաւաբանն անգամ ձեռքը խղճին դրած կը խոստովանէ, որ ծարիր վարմունքը ոճրագործութիւն է. Գաղափարութեամբ եւ նոյն իսկ անքաղաքակիրթ ո՞ր պետութեան օրինազիրքն է թոյլ տալիս «մասնաւոր սեփականութեան» յափշտակումը «Մասնաւոր սեփականութեանը» մի հսկայական կուռք է, որը պաշտուած է այժմեան հասարակութեանների մէջ, մի անձնուձեռնի սրբութիւն, որին երկրպագում են բուրժուական տէրութիւնները, արտուածային մի օրէնք, որին ամենախիստ զգուշութեամբ եւ ամենաշաւատարիմ կերպով շոյում եւ պահպանում են իշխանութիւնները, այն՝ ինքը ուսու իշխանութիւնը ամենից առաջ. Իսկ այսօր, ոտնատակ տալով իւր սրբոցրաց սկզբունքը, կուռքանալով իւր պաշտած օրէնքի գիմնաց ձեռք է մէկնում նա ուրիշ ունեցածի վրայ. ինքը արհամարում է իրեն Բայց նրան թոյլատրելի է, ասում է բուրժուական օրէնքը, որովհետեւ նա ամենակարող է եւ ամենամասնափակ իրաւունքի տէր... Եթէ մի քաղցած

բանւոր ակցիօնարական մի ընկերութեան գործարանից թոցնէ մի գործիք, եթէ ցրտից կուղ եկած մի գիւղացի մի մեծ կալածատէրի անտառից մի կտոր փայտ կտրէ իր մարմինը տաքացնելու համար, ամբողջ բուրժուայ հասարակութիւնը իսկոյն կը գոռայ աւազակութիւն, ոտնակոխութիւնը՝ ոճրագործութիւն, իսկ օրինազիրքը կարծանագրէ՝ կախաղան... այն ինչ ուսու իշխանութիւնը առանց կարմրելու մի «հրամանով» թոցնում է մի նաւարակական սեփականութիւն. ո՞վ պիտի պատժէ նրան... Միայն եւ միայն նրա մար, միայն եւ միայն այն բանւորը, որը մի ձեռքով բարձրացրած ունի ազատութեան գրօշը, միւս ձեռքով էլ փորում է նրա գերեզմանը. նրա կենդանութիւնը մեզ հայերիս համար մահ է նշանակում, մենք անկարող եւ անուժ ենք նրա բռնադատութիւնների եւ ազգակերութեան դէմ կուելու. մեր արգարութեան ասանը նոյն պետութեան բանւոր դասակարգն է միայն, որն անկեղծօրէն ցանկանում է իւրոր ազգերի ազատութիւնն ու եղբայրութիւնը Ուստի անհրաժեշտ աշխատել ամենայն կերպ օգնելու ուսու սոցիալիստներին. թող զանազան ազգութիւնների բանւորները համերաշխութեամբ աշխատեն գերեզման փորելու մեծ գործում:

Եւ հետո չէ այն ժամանակը երբ գերեզմանը լիովին կը պատրաստէ ու թաղման հանդէսը ազատութեան երգերով կը կատարէ:

Պետին Ս. Կասեան

Տ Գ Է Տ Ս Ը

(չարունակութիւն եւ վերջ)

Ընդհանրապէս պը. Վարդօի աչքին հանդիպածը «գեղեցիկ» ու ուրախառիթմ կերակայ, մանաւանդ հայ սօցիալիստները հաւանականօրէն ուշքը շփուած ըլլալուն համար է որ ծուռ կը տեսնայ ու կը կարգայ. Աւելին պիտի ըսեմ. անիկայ բնածին մէկաֆիզիք մըն է, անոր միտքը անկիւնաւոր է: Ան չկրցաւ հասկնալ ուրիշ մէկ*)

*) Առողջական պատճառներով երրորդ մասը չէ աւարտած: Ա. Յ.

յօդուածս ալ՝ «Թէ ինչ է սօցիալական յեղափոխութիւն» վերնագրով*), որուն իբր ապացոյց կը ծառայէ անոր անմիտ հնախաբանը Շարժումի 497 թիւին մէջ:

Թէ որքան ես չեմ հճանաչում հայ ժողովրդին՝ պ. Վարդօն կրնար տեսնալ Պարիպի թարգմանութեանս կցուած յառաջաբանէն, որ թարգմանաբար զետեղուած է «Շարժումի» 511 ու 512 թիւերուն մէջ. բայց կերակայ պ. Վարդօն «համեստութիւնը» չէ ունեցած զայն կարգալու, կամ եթէ կարգացած է, անկարող եւ զած է հասկնալու: Թէ ինչպէս կը նկատեմ հայ ժողովրդին գտնուած «ֆազան», պ. Վարդօն կրնար այդ տեսնալ «Շարժումի» 532 թիւին մէջ զետեղուած պ. Ապրօի թղթակցութեանէն: Աւելին կայ, նոյն իսկ «գրգռուած բացատրութեան» մէկ անկիւնը կըսեմ թէ ու... հակադրելով հայ ազգին այն ատենւան (Սահակ ու Մեսրոպի ատենւան) պետքերուն արդի պէտքերը... Ըսել է թէ ես ի նկատի ունիմ «եթաղանի» շնորհը ու բարձումը: Սակայն պ. Վարդօն ազ չտեսնար ու չը հասկնար, որովհետեւ ես կըսեմ արդի պէտքերը, ոչ թէ «եթաղանի» բարձումը որ միւնոյն է: Ի մեծ հեղեղութիւն հակառակին՝ պ. Վարդօյին գրած «արաջնակարգ ճշմարտութիւնը թէ հայ ժողովուրդը պէտք է ազատել օտարի լրծից», ծանօթէ նոյն իսկ առաջին դասարանի աշակերտուհիներու: Ասոր վրայ խօսիլ անգամ չարժեք: Խնդիրը՝ պատրաստել ի՞նչ միջոցներով մեզ բերելու վրայ կրնայ ըլլալ: Ասոր վրայ պ. Վարդօն կրնայ բան մը ըսել մեզ:

Թէ պը. Վարդօյին՝ — որ Լէզուրնօն կային «կարգացած ըլլալուն»

*) Տես «Շարժումի» 494, 497, 506, 507, 508, 509 թիւերը:

լալու յաւակնութիւնը ունի (կարելի է իբր ուղեպա) — քիտոզութիւնը պերճախօս ապացոյց մըն է անոր մտաւոր մեքլութեան, այդ արդէն կը հաստատուի հետեւեալով. ունեք էլ պաշտպանելով նախնայի վրէժ յայտնում ենք որ մեզ համար սիրելի է մարդ արարածը, ոչ միայն բանւորը: Մենք կը հարցնենք պ. Վարդօյին թէ ի՞նչ կը նշանակէ «մեզ համար սիրելի է մարդ արարածը, ոչ միայն բանւորը»: Խօսքի «մարդ արարածը» սենսէլ ֆրազա մըն է միայն, որովհետեւ իրականութեան մէջ գոյութիւն չունի «մարդ արարածը» այնպէս, ինչպէս որ պ. Վարդօյին գլխուն մէջ կայ: Արդէն Չէրնիշչիւքի, ուսու մեծ իմաստասէրը, փայլուն կերպով փաստեց որ «չկայ վերացական ճշմարտութիւն՝ ճշմարտութիւնը թանձրացեալ է»):

Պ. Վարդօն, գոնէ իբր ուսասնայ, պէտք է գիտակից ըլլար այս իրողութեան, բայց ան ասանկ բաներէ չախորժիր: Ուրեմն իրականութեան մէջ չկայ մարդ արարած, այլ կայ մարդ — արարած — բանւոր, մարդ — արարած — պուրժուա, մարդ — արարած — մանրաբուրժուա կային, որոնք իրարու հակընդդէմ շահեր ունին: Ասկէ յետոյ ըսել թէ «մեզ համար սիրելի է մարդ արարածը» կը նշանակէ պղտոր ջուրի մէջ ձուկ որսալ, եւ կամ նեղուի եզերքը ման գալ առանց գիտական անցազրի, այսինքն կոկորդիլոսեան, պատուելիական արցունք թափել երկրիս բոլոր ուղղութեամբը:

Եթէ պ. Վարդօն հետեւողական էր իր տրամաբանութեան մէջ, պէտք է խոստովանի որ միւնոյն չափով կը սիրէ մարդ — արարած:

*) Տես «Къ вопросу о развитии монистического взгляда на историю» Н. Белтова.

ՌՈՒՍ-ԱՒՍՏՆԱԿԱՆ ՔԱՂԱՎԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԹԵՐԱՎԱԳՂԻՆ ՄԷՋ

Բայց ամենքին համար է ն վտանգաւոր թշնամին հիւսիսային մեծայաղճ հսկան է, որ անլքի լրբութեամբ մը երեան կելլէ ամենուրեք՝ ուր ո՞մարդաէր Եւրոպան կը յաջողի ձեռք զարնել բանի մը: Եւրոպայի է՛ն գլխաւոր փափաքն է իր այս վըտանգաւոր թշնամին ձեռքերը ու ոտքերը կապել, եւրոպայի այս փափաքին, կարծես, նոյն ինքն, բնութիւնն ալ օգնութեան հասած ըլլայ: Պաշարած ամեն կողմէ սառնային անապատներով ու ծովերով և զօրաւոր թշնամիներով, Ռուսիա այսօր և ո՛չ մէկ կողմէ պատ ծով ու տարածութիւն ունի որոնք թոյլ տային իրեն զարգացնելու իր ոյժերը: Եւ ոչ այնքան հեռուն — դէպի հարաւ, անոր աչքին առջև կը պարզուի, ինչպէս Գեուուր օվասիս մը անապատաւ

կանին տուչե, մեծապայծառ, շրքեղ Վոսիորը, սրուն թարմ վէտ վէտ ալիքները կը խաբեն ազատութեան ու տարածութեան համար մաշուող ուսական սիրտը: Ա՛հ, այս զմայլելի Վոսիորը ձեռք ձգելու համար, որքան մեծ յոյսեր տածած, որքան զսհերու աւրին տուած է Ռուսիա Յ դարէ իվեր, բայց իլո՛ւր, — հենցա միտա Եւրոպան անլուր դաժանութեամբ մը իդերե հանած է Ռուսիոյ բոլոր ծրագիրները ու ձգտումները:

Իրիմի քաթաղութիւն յետոյ, որ վերջնականապէս փճացուցնուսիոյ մինչև այն ատեն ի հաշիւ թուրքիոյ վաստկածը, ան (Ռուսիա) դարձեալ ետ չկեցաւ իրեն կտակուած իդէպէն: Սլավ ազգերու պաշտպանի գիմակին տակ, նորէն սկսաւ խառնուել թուրքիոյ գործերուն, աշխատելով մէկիկ մէկիկ թուրացնել աւոր արդէն տկարացած կառավարական մեքենայի պտուտակները:

Բայց ան չէր գոհանար միայն ասով. ան կը փնտռէր (երբ եւրոպան ուրիշ տեղ զբաղած է) Թուրքիոյ վրայ յարձակելու յարմար ժամանակը և եթէ եւրոպա անոր թոյլ տար գրաւած երկիրներուն տէր ըլլալու, այն ատեն անոնց մէ պիտի կազմէր, մեծ իշխանութիւն մը, որ իրեն պիտի ծառայէր իբր կամուրջ դէպի Կ. Պոլիս: Այսպիսի առիթ մը չուտներկայացաւ իրեն: Գաղիա տակաւին նոր յաղթուած էր Գերմանիայէն, իսկ այս վերջինը Ռուսիոյ բարեկամն էր, Աւստրիոյ բերանը Պոսնա-Հերցեգովինայով կը գոցուէր, իսկ Անդրիա մեծ թրքական գազանութիւններուն դէմ կատարուած միթիկները կազմալուծած էին զայն: Թուրքիա կ'այրէր բայերու մէջ, և բոլոր Եւրոպա ստրասիէ կը սառար... Այն ատեն մեր ուղաւորաբան Աւստրիոյ հետ գաղտնի գաշինք կապելէ վերջը, որու հիւման վրայ իրաւունք կը տրուէր

վերջինին գրաւելու Պոսնան ու Հերցեգովինան որպէսզի Ռուսիոյ արգելք չհանդիսանայ Պուլկարիոյ մէջ, — հարցունքներ աչքին՝ քալից դէպի հարաւ ազատելու համար գերի սլանները: Ռուսական զօրքերը յաղթական կերպով հասան մինչև Կ. Պոլիս, ու եւրոպա զանր հուրած այս յաջողութեանէն, անմիջապէս անոնց առաջը առաւ 19 Փետր. 1878-ին հռչակաւոր Սան-Սթէֆանոյի դաշնագրութիւնը կնքուեցաւ: Բայց եւրոպա շատ լաւ գիտէր թէ ինչ նշանակութիւն ունի Ռուսիոյ համար այս մեծ Սան-Սթէֆանեան Պուլկարիան: Ահա թէ ինչու համար ան Պետլինի համաժողովին մէջ հիմնայատակ ըրաւ Ռուսիոյ բոլոր ծրագիրները, որոնց համար 25 տարի է իվեր Պուլկարիոյ մէջ այնքան արցունք թափուած են:

քաղ. Եւրոպա (Շարունակելի)

Հայ-բանորը, մարդ-արարած-
 Հայ գիւղացին, մարդ-արարած-
 կարմիր Սուլթանը, մարդ-արար-
 րած-ուսն Կարը, մարդ-արարած-
 Պիմարը և մարդ-արարած-նե-
 րու ուրիշ երգուեալ թշնամիները:
 Սակայն... զպուշացէք, պ.
 Վարդօ:

Փիլիպի Անդրեաս Յակոբեան

**ՌՈՒՍԱՅ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿՄԱՍՍԱ-
 ԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԵՐԻՍ ՆԿԱՏՄԱՄԲ**

Մի քանի օր առաջ որպէս
 հեռագրական լուր, լրագիրները
 հաղորդեցին որ Ռուս կառավարու-
 թիւնը որոշեց «ամենաողորմա-
 ծաբարո գրաւել Հայոց եկեղեցա-
 պատկան կալուածները, որոնց
 եկամուտով էր որ պահուում էին
 Հայոց դպրոցները, մի խօս-
 քով ըտրոք եկեղեցապատկան ան-
 շարժ ու շարժական կալուածները,
 որովհետեւ ասած է թէ՛ այսուհետեւ
 դրամական հաշիւներ ևս պիտի
 ներկայացուի կառավարութեան,
 և դարձեալ նախ կառավարութիւ-
 նը այդ անուամբ է նորա համար,
 որ գիւղական քահանաները գրտ-
 նուում են շատ աննախանձ լի գրու-
 թեան մէջ: Այդ կալուածներից
 ստացւած եկամտի 50% ու պիտի
 վարձատրուեն քահանաները: Կա-
 լուածները գնահատուած է 28 մի-
 լիօն ու ըրի կամ 65 միլ. ֆրանկ:
 Հետագայից է ամբողջ Հայու-
 թեանը իմանալ թէ՛ ինչպէս պի-
 տի վերաբերեն, այդ կարևոր
 հարցին ամենայն հաւոյ կաթո-
 շիկոսն ու իւր Միտոգական-
 ները: Մի՞թէ այս անգամ էլ լու-
 թեան պիտի ամբողջ ազդի ու-
 նեցածը յանձնեն ուսու. անյազ
 կառավարութեան, ասելով որ կայ-
 սեր հրամանը սուրբ է, ինչպէս
 որ միշտ անուամբ են:

Բայց թող ամենայն հայոց
 կաթողիկոսը լաւ իմանայ որ այդ
 բանը իւր իրաւասութիւնից բար-
 ձըր է, նա երգել է հաւատարմի-
 մնալ եկեղեցուն, նա իրաւունք
 չունի այդ հարցում մի որեէ բան
 անելու, այլ այդ իրաւունքը ազգը
 վերապահ է իրեն:

Օրէնքով եկեղեցին պատկա-
 նում է ազգին, ուստի տրամաբա-
 նօրէն եկեղեցու ստացուածքն էլ
 պատկանում է ազգին: Եւ որով-
 հետեւ Հայ ազգը ներկայումս քա-
 ղաքականապէս բաժանուած է ե-
 րեք մասի, այն է՝ Ռուսահա-
 յաստան, Տաճկահայաստան և Պարս-
 կահայաստան, և բացի այդ՝ Ա-
 մերիկայի Միացեալ Նահանգնե-
 րում կան 50 հազարի չափ հայեր,
 Բոլղարիայում և Ռուսաստանում
 կան մօտ 20 հազար հայեր, որոնք
 գտնուում են Էլմիսիանայ իրաւա-
 սութեան տակ, հետեւապէս և վը-
 ճարում են որոշ տուրք, ուստի
 Ռուսահայաստանում գտնուած եկե-
 ղեցապատկան կալուածներն ու
 գրամներն ո՛չ թէ պատկանում են
 Ռուսահայերին, այլ ամբողջ Հայ
 ազգին: Այդ բանում ուսաց Յա-

րը փոքր ինչ սխալում է. չէ՞ որ
 հայոց եկեղեցական օրէնքով կա-
 թողիկոսը ընտրուած է ամբողջ հա-
 յութիւնից և այդ օրէնքը ճանա-
 չել է Ռուս կառավարութիւնը,
 տարով նորան Պաթեմիա ասած
 օրէնքները: Եւ մի՞թէ մուսնում
 է Յարի կառավարութիւնը որ իւր
 թոյլտուութեամբ էր որ պատգա-
 մաւորները ընտրեցին ամենայն
 հայոց կաթողիկոսին, և ինքը
 Ռուս կառավարութիւնը, օրինա-
 կան համարելով ընտրութիւնը
 վաւերացրեց և հաստատեց ըն-
 տրուած կաթողիկոսին:

Եթէ միայն ներկայ հարցի
 վերաբերմամբ Ռուս կառավարու-
 թիւնը զեկավարուած լինի օրէն-
 քով, այդ նշանակումէ թէ՛ չէ
 յարգում իւր օրէնքը, իսկ եթէ
 կամայականութեան է դիմում—որ
 շատ բացորոշ է—այն ժամանակ
 այլևս հարցը փոխում է:

Մենք կարծում ենք որ ամե-
 նայն հայոց կաթողիկոսը ներկայ
 հարցին կվերաբերի լրջութեամբ
 և ոչ թէ միւս հարցերի նման
 վրայից կանցնի:

Հայոց կաթողիկոսը մինչև որ
 ամբողջ ազգի կարծիքը չունենայ,
 կարծում ենք որ չէ կարող իւր
 հայտան կամ հոչան ասել: Ուստի
 ցանկալի էր որ կաթողիկոսը ամ-
 բողջ հայութեան հրաւերէր մի
 ընդհանուր պատգ. ժողովի, որպէս-
 զի այդ հարցի պատասխանը այդ
 ժողովը տար, կամ եթէ անհնար
 է, թող իւրաքանչիւր տեղ ժո-
 ղովներ գումարի և վճիռները,
 հաստատուած տեղային կառավա-
 րութիւնից, ուղարկէի էլմիսիան
 (օրինակի համար, ամերիկահայա-
 տակ հայերի ժողովի վճիռը հաս-
 տատուի Ամերիկեան կառավարու-
 թիւնից և իւր գեղարարի միջո-
 ցով ուղարկէի կաթողիկոսին: Նոյ-
 նը և միւս տեղերը):

Իսկ եթէ կաթողիկոսը չի ցան-
 կանար այդ բանը անելու և կամ
 Ռուս կառավարութիւնը թոյլ չի
 տար այդպիսի ժողով գումարե-
 լու, այդպէս պարզ թող կաթո-
 ղիկոսը հրաժարուի կաթողիկոսա-
 կան գահից:*)

1903 թ. Յուլիս 25
 Կովկաս, Բ...քաղաք
 Մամիկոն

Ն Ա Ի Ա Ջ Գ Ո Ի Ծ Ո Ի Թ Ի Ի Ն

Մեր սովորութիւնը չէ և չպիտի
 ըլլայ ամեն տիմարներու կամ
 վատերու և կամ նախանձտներու
 զրպարտութիւններուն ու հայհո-
 յանքներուն ու շաղբու թիւն դար-
 ձնել: Մեր կողմէն այդ մեծ պա-
 տիւ կըլլար մեր բազմապան և
 անակուայ թշնամիներու համար:
 Անցորդը կարևորութիւն չտար

*) Կը յուսանք որ մեր թղթակցին
 առաջարկութիւնը արձագանգ գտնելով,
 ըտրոք հայաբնակ կեդրոնները լրջօրէն
 կըսրաղին Ռուսահայ եկեղեցապատկան
 կալուածներու գրուման խնդրով:
 Խմբ.

ճամբան իր վրայ յարձակող շու-
 ներու հաջողին: Բայց կը պատա-
 հի որ երբեմն ստիպուած կըլլայ
 գաւազան բարձրացնելու անոնց
 վրայ: Ինչպէս կը տեսնենք մենք
 ալ այդ հարկին մէջ պիտի գըա-
 նուինք դժբախտաբար:

Ժամանակէ մը ի վեր «Իրաւ-
 ունք» կոչուած բոլորովին անի-
 բաւ փալաս-թերթիկը սկսած է
 հին զրպարտութիւնները նորերու
 հետ խառնելով, զգուելի և ստո-
 բաբար յարձակումներ ընել
 նազարէկին դէմ: Հարկաւ,
 գաղտնիք չէ, թէ այդ յարձա-
 կումները ինչ անխտտովանելի
 միտումներով և զգացումներով
 թերագրուած են: Սակայն միւ-
 չե իսկ զրպարտութիւններն ալ
 իրենց աստիճանը կուենան զըր-
 պարտիչներու և վատաբանողնե-
 րու խցին մէջ: «Անիրաււին»
 համար այդ չափն ալ չկա: Ժա-
 մանակին, վեց-եօթ տարի առաջ,
 հրատարակուած, Հնչակեան Կու-
 տակցութեան Պատգ. ընդհ. ժո-
 ղովի վոլմէն, (ատոր տակ Հմա-
 յեակ Խուչուլեանին ստորագրու-
 թիւնն ալ կայ ինչպէս նաև Լօն-
 տոնի Անդրիակոս: Գատարանի
 Բերնով («Հնչակի յայտնի դատը»)
 պաշտօնապէս ինքուած եր իրրեւ
 բազարձակ փապարտիսն անսխ-
 գրուած *) տխուր և ստոր ամբաս-
 տանութիւնը նորէն գրել և մի-
 ախտներու միտքը շփոթելու ճիգ
 թափելը արդէն չափազանց դա-
 տապարտելի և անաւան ընթացք
 մընէ: «Անիրաււն» այդ ընթացքը
 բռնած է հիմա: Կէտ մը, որ զա-
 ւեշտական ըլլալով հանդերձ,
 քստմնելի ալ է և ընտրուած պարզ
 կերպով կապացուցանէ մեր մա-
 քիստիկոս թշնամիներու խցին
 սևութիւնը և ամեն միջոցներու
 ձեռք գործելուն քաջութիւնը,
 հետեւեալն է: 1896-ին վատերը
 զրպարտեցին, թէ 25 յոյն գը-
 րամ ի՞բը թէ զրկուած չէ եզեր
 և այդ դրամին գումարը կը նը-
 շանակէին երկու հազար ոսկի:
 Անկէ վերջը, անոնց յաջորդները
 իրենք իրենց ըսին, թէ լեզուն
 ոսկոր չունի, ի՞նչու չաւելցնել
 այդ գումարը և ըրինե՞րք հա-
 զար: Տարի, տարի ու կէս առաջ
 սրիկայ մը երաւ հրատարակ, հրա-
 տարակելով ազտոտ և ամենէն ա-
 ռաջ իրեն սեփական նկարագիրը
 ցուցնող պրօշիւր մը, որուն մէջ
 սրիկայական հանճարը երեք հա-
 զարն ալ շինեց չորս հազար:
 Հիմա ալ «Անիրաււ» այդ չորսը
 կը շինէ չորս-հինգ հազար: Ի՞նչ
 փոյթ, չէ՞ որ լեզուն անուկը է,
 խիզճն ալ սեւ: Յոյս ունինք, որ
 թուարանական այդ յառաջագի-
 մական խաղերով ժամանակին
 5000-ը 10000-ն ալ կանցնի:
 Չարմանալի ի՞նչ կայ, անիրաւ-
 ները յառաջագիմելու վրայ են:
 Բայց այդ թուարանական ածպա-
 րարութիւններն ինքնին աչք ծա-

կող սպացոյցներ չեն, թէ ինչ-
 պիտի հնարովի սուտերով և զըր-
 պարտութիւններով զբաղուեն մեր
 ապիկար ու անաւան թշնամիները:
 Այսուհանդերձ անոնց ըն-
 թացքը բնորոշ ու շատ շտական
 ալ է: Եւ երբէ՛ք, ո՛չ մէկ ժա-
 մանակ այդ թշնամիները յետեւ
 ստորագրուած ամբաստանութիւն-
 ները, այլ ընդհակառակը, ինչ-
 պէս վերը ըսինք, անոնց ըսածին
 հակառակն է ապացուցուած պաշ-
 տօնական և դատական ապտա-
 կով մը:

«Անիրաււին» այդ ընթացքը
 կը հասնի անուր ստորագրուած
 թեան, երբ նոյն սրիկայ Համ-
 բարձում Առաքելեան կոչուածին
 յերբերած սուտերը և զրպարտու-
 թիւնները ևս վեր կը հանէ և
 անոր պատական քանդակները
 ներով ու ծայրէ իծայր ստալք
 և անամօթ պատմութիւններով
 «Անիրաււին» էլ ըրը կը զարգարէ
 արժանաբար: Առաքելեան գողի
 մը պէս ուրիշին տունը մտնելու
 փորձ մը ըրած է իր զգուելի
 պրօշիւրով և ուրիշի ընտանեկան
 ներքին, մասնաւոր խնդիրներու
 մէջ թափանցած է, որ բացար-
 ձակ հասարակական և բարոյա-
 կան ոճիւր մըն է, որովհետեւ ա-
 մեն անհատի ներքին մասնաւոր
 կեանքը անբռնաբար լի սրբու-
 թիւն մըն է և դուրսի անխտտով
 մէջ կերպով իրաւունք չունի այդ
 կեանքը անամօթաբար խճճելու:
 Առաքելեան իր այդ լիբը ըն-
 թացքին համար արդէն շատերու
 թուրք վայելած է Կովկաս, որ
 միշտ յայտնի եղած է իբրև մարդ
 մը, որ իր ներքին անխտտով
 ներքին հաշիւներուն համար ընդա-
 նակ է զրպարտել և վատաբանել
 ուէ մէկը: Եւ այդ սողունը պահ-
 ուրտած է հիմայ ապիկար «Մը-
 շակ» ծալքերուն տակ, այն
 «Մշակ» ինքուած հիմնադիր Արթ-
 րուհի մասին ալ ժամանակին կը
 պտուային վատերը թէ ուրիշի
 կնիկը փախցուցած էս:

Մենք կը տեսնանք թէ ու-
 նիրաււը, որուն տակէն ականջներ
 կերկին, Առաքելեաններու ար-
 բանեակն է եղած: Կը շնորհաւո-
 բենք զինքը: Բայց շնորհաւորե-
 լով հանդերձ կապարտարենք ի-
 րեն, որ առանց ո՛ւէ փաստի և
 ապացոյցի ուրիշը ամբաստանելը
 բացարձակ և ստոր զրպարտու-
 թիւն ու վարկաբեկութիւն կը հա-
 մարուի թէ՛ բարոյական և թէ՛
 հասարակական օրէնքի տեսակե-
 տով, և միևնոյն ժամանակ կը
 նախազուշտացնենք զինքը, որ
 վերջ ի վերջոյ օրինական հարկ
 եղած միջոցներու դիմելու տխուր
 հարկին մէջ չընէ իր քարելի
 ամբաստանութիւններուն առաք-
 կայ եղող անձերը, որով ո՛չ մի-
 այն պիտի դատապարտուի լու-
 թեան, այլ նոյն իսկ օրէնքի մի-
 շոցու պիտի տուծէ իր գիւղային
 վարմունքին համար:

Ամեն բան չափ ու սահման
 ունի:

Տեղի սղութեան պատճառաւ, մա-
 կերտական ապտամբութեան վերա-
 բերեալ լուրերը յաջորդելու:

Ստեփան Գ. Ստեփանյան
 Ստեփան Գ. Ստեփանյան

Ստեփան Գ. Ստեփանյան
 Ստեփան Գ. Ստեփանյան

Ստեփան Գ. Ստեփանյան
 Ստեփան Գ. Ստեփանյան

Ստեփան Գ. Ստեփանյան
 Ստեփան Գ. Ստեփանյան

Ստեփան Գ. Ստեփանյան
 Ստեփան Գ. Ստեփանյան

Ստեփան Գ. Ստեփանյան
 Ստեփան Գ. Ստեփանյան

Ստեփան Գ. Ստեփանյան
 Ստեփան Գ. Ստեփանյան

Ստեփան Գ. Ստեփանյան
 Ստեփան Գ. Ստեփանյան